



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

МУШЕГ АКОПЯН

ПРОБЛЕМЫ АНАЛИЗА И ОЦЕНКИ ГОСУДАРСТВЕННОЙ ПРОГРАММЫ

Ключевые слова: общественная программа, жизненная ценность, общественное предпочтение, эффективное распределение, распределенный вес, социальная справедливость

Эта статья представляет собой комбинацию затрат на реализацию государственных программ и ожидаемых результатов, что подчеркивает необходимость оценки цен на основе результатов, не основанных на рыночных ценах. Обсуждались методы оценки ценности жизни, ценности природного богатства и т.д. В статье также была оценена эффективность распределения государственных программ.

MUSHEGH HAKOBYAN

PUBLIC PROGRAM ANALYSIS AND ASSESSMENT ISSUES

Key words: public program, life value, public preference, effective distribution, distributed weight, social justice

The article is a combination of the cost of implementing public programs and anticipated outcomes, highlighting the need to assess non market-based outcomes prices. There have been discussed the methods for evaluating the value of life, the value of natural wealth ect. The article also assessed the effectiveness of the distribution of public programs.

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

ՀԱՐԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հիմնաբառեր. հարկեր, հարկման արդյունավետություն, ուղղակի հարկեր, անուղղակի հարկեր, հարկային քաղաքականություն, հարկային մարմին, շահութահարկ եկամտահարկ, ակցիզային հարկ

Հոդվածում վերլուծվել են հարկերի դասակարգման հարկանիշները և բնորոշվել դրանց տեսակներն ու գործառույթները: Բացի այդ, հիմնավորվել է, որ արդյունավետ հարկային քաղաքականությամբ հնարավոր է խթանել տնտեսական ակտիվությունը՝ գործնականում իրականացնելով արդարացիության համապատասխան գործառույթներ:

Հարկերի դասակարգումը դրանց խմբավորումն է ըստ մի շարք էական հատկանիշների: Հարկերի դասակարգման շնորհիվ՝ յուրաքանչյուր հարկատեսակ «հայտնվում» է տարբեր խմբում, որի արդյունքում ստանում է տարբեր գնահատականներ, ենթարկվում բազմակողմանի ուսումնասիրության, և բացահայտվում է դրա իրական էությունը: Այդ ամենը նպաստում է հարկերի հաշվարկման ու գանձման գործընթացի արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Հետևաբար՝ հարկերի դասակարգումը ներգործում է հարկային քաղաքականության արդյունավետության վրա՝ ունենալով ոչ պակաս կարևոր նշանակություն:

Հարկերը, որպես կանոն, դասակարգվում են ըստ մի քանի հատկանիշների (չափանիշների): Դրանք են.

1. Ըստ հարկման եղանակի, որի դեպքում հարկերը բաժանվում են ըստ ուղղակիի և անուղղակիի:

Այս բաժանման հիմքում սպառողների վրա հարկային բեռի տեղափոխման հնարավորության չափանիշն է: Ուղղակի հարկերի դեպքում հարկային բեռն անմիջականորեն հարկ վճարողների վրա է, իսկ անուղղակիի պարագայում հարկ վճարողները դա տեղափոխում են այլ անձանց վրա՝ այն ապրանքի կամ ծառայությունների գնի մեջ ներառելով:

Այլ կերպ ասած, հարկերն ըստ ուղղակիի և անուղղակիի բաժանման հիմքում եկամտաձևսասյին հատկանիշն է: Ընդ որում, ուղղակի են դիտարկվում այն հարկերը, որոնց հաշվարկման ու գանձման հիմքում եկամտի կամ ունեցած գույքի մեծությունն է, իսկ անուղղակի հարկերի հաշվարկման ու գանձման հիմքում ապրանքի կամ մատուցված ծառայության գինն է: Բացի դրանից, հարկերի հաշվարկման ժամանակակից մեթոդաբանությունը փաստում է, որ բոլոր տեսակի հարկերը հաշվարկվում են օրենսդրությամբ սահմանված հարկադրույքները հարկվող օբյեկտի նկատմամբ կիրառելու միջոցով, իսկ վերջինս տարբեր հարկատեսակների գծով հանդես է գալիս տարբեր դրսևորումներով, որոնք կարելի է բաժանել երեք խմբի.

առաջին՝ ապրանքների կամ ծառայությունների արժեք,

երկրորդ՝ սեփականության իրավունքով (ներառյալ նվիրատվածները և ժառանգվածները) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատկանող գույքի արժեք,

երրորդ՝ ֆիզիկական անձի եկամուտ կամ իրավաբանական անձի հարկվող շահույթ:

Հարկման օբյեկտի նշված բոլոր խմբերին համապատասխան՝ տարբեր անվանումներով հարկեր վճարողները հարկվող օբյեկտի սեփականատերերն են՝ միայն մեկ տարբերությամբ, որ հարկման օբյեկտի երկրորդ և երրորդ խմբերի հարկատեսակները գանձվում են հարկման օբյեկտի ուղղակի կամ անմիջական սեփականատերերից, իսկ առաջին խմբինը՝ հարկման օբյեկտի անուղղակի կամ ոչ անմիջական սեփականատիրոջից, այսինքն՝ ապրանքների ու ծառայությունների վերջնական սպառողներից, որոնք կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Ինչ վերաբերում է ապրանքը կամ ծառայությունը վերջնական սպառողին տրամադրող անձին, ապա նա ընդամենը հարկը հարկվող օբյեկտի անուղղակի կամ անմիջական սեփականատիրոջից պետու-

թյանը փոխանցող միջնորդ օղակ է: Հետևաբար՝ հարկերն ուղղակիի և անուղղակիի¹ բաժանվում են ըստ հարկվող օբյեկտի սեփականատիրոջ պատկանելության աստիճանի: Ուղղակի հարկերին են վերաբերում շահութահարկը, եկամտահարկը և գույքային հարկերը, իսկ անուղղակի հարկերին՝ ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը և մաքսերը²:

Ակցիզային հարկ: Այն կիրառվել է դեռևս Հին Հռոմում՝ աղի և սպառման այլ ապրանքների նկատմամբ, XIV դարում՝ Ֆրանսիայում աղի և գինու նկատմամբ, XVIII դարում՝ Անգլիայում աղի նկատմամբ:

Ռուսաստանում արդեն XIX դարի վերջերին, երբ սկսվեց հարկային համակարգի ձևավորումը, և 1881-1885 թթ. իրականացվեցին հարկային ռեֆորմներ, վերացվեցին աղի հարկը և գլխահարկը՝ մեծ տեղ տալով ակցիզային հարկերին:

ԽՍՀՄ ձևավորման սկզբնական շրջանում ակցիզային հարկի կիրառման շրջանակները նեղացվեցին, իսկ 1930 թվականին վերացվեցին բոլոր տեսակի ակցիզային վճարներն ու հարկերը:

Ներկայումս ողջ աշխարհում ակցիզային հարկով, որպես կանոն, հարկվում է ապրանքատեսակների երեք խումբ՝ ավիոհոլային խմիչքներ, վառելիք և ծխախոտի արտադրանք:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ընտրված ապրանքները ներառում են հետևյալ չափանիշներից մեկը կամ մի քանիսը. նախ՝ դրանց արտադրությունն ու վաճառքը հարկվում են կառավարության կողմից, երկրորդ՝ դրանք բնութագրվում են գնային պահանջի գրաֆիկով, երրորդ՝ դրանք ճոխության պարագաներ կամ ծառայություններ են, չորրորդ՝ կառավարության կողմից դրանց սպառումը համարվում է բացասական արդյունք առաջացնող:

ՀՀ-ում ակցիզային հարկի հարցերն առաջին անգամ կանոնակարգվել են ՀՀ նախագահի 27.01.1992 թ. հրամանագրով, այնուհետ 06.06.1992 թ. ընդունված և 01.07.1992 թ. գործողության մեջ դրված «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով: Ներկայումս ակցիզային հարկի հետ կապված հարցերը կանոնակարգվում են ըստ 07.07.2000 թ. ընդունված և 01.08.2000 թ. գործողության մեջ դրված «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի, դրանում կատարված փոփոխությունների ու լրացումների:

¹ Հարկերի տարանջատումն ըստ ուղղակիի և անուղղակիի առաջին անգամ կատարել է անգլիացի փիլիսոփա Ջ. Լոկը 1692 թվականին:

² Հին Հունաստանում պետական պաշտոնները համարվում էին հեղինակավոր, սակայն պետական պաշտոն զբաղեցնողները չէին վարձատրվում պետության կողմից: Դեռ ավելին, երբեմն հարկ էր լինում պետական կարիքների համար ծախսել սեփական միջոցները: Շինարարությունն ու այլ մեծածավալ աշխատանքներ կատարվում էին ստրուկների կամ քաղաքացիների կողմից: Այդ իսկ պատճառով ուղղակի հարկման անհրաժեշտություն այն ժամանակ առանձնապես չէր էլ զգացվում: Այդ ժամանակներում հարկը դիտվում էր որպես հաղթողին տուրք, պարգև, նվիրատվություն: Սակայն, այլ էր մաքսերի պարագայում: Դրանք գանձվում էին օտարերկրացի վաճառականներից և առևտրականներից քաղաքային դռների մոտ, շուկաներում և այլ տեղերում: Եվ որպեսզի իրենք վնաս չկրեին, վաճառականներն ու առևտրականները մաքսերը ներառում էին ապրանքի գնի մեջ: Այլ կերպ ասած, օտարերկրացիների համար նախատեսված մաքսերը սեփական ժողովրդի համար դառնում էին անուղղակի հարկեր:

Ավելացված արժեքի հարկ: Ավելացված արժեքի հարկով հարկվում է ավելացված արժեքը, որի գաղափարը 1919 թ. առաջ է քաշել գերմանացի գիտնական Վիլհելմ ֆոն Սիմենսը՝ այն անվանելով «շրջանառությանից բարելավված հարկ»: Սակայն, պետք է փաստել, որ ավելացված արժեքի հարկը հարկային համակարգ «ներմուծելու» գաղափարը տվել է ֆրանսիացի Մ. Լորերը դեռևս 1954 թ., և առաջինն այն կիրառվել է Ֆրանսիայի հարկային համակարգում՝ 1958 թ.:

Ավելացված արժեքի հարկը եվրոպական տնտեսական գոտի «ներմուծվել է» դեռևս 1970 թ. (ԱԱՀ-ի 1-ին և 2-րդ դետեկտիվներով)՝ փոխարինելով մինչ այդ գործող արտադրականին և սպառողականին: Ներկայումս ավելացված արժեքի հարկը լայն տարածում է ստացել աշխարհի շատ երկրներում: Սակայն, կան նաև երկրներ, որոնց հարկային համակարգերում այն չի կիրառվում: Այդ երկրներից են, օրինակ, ԱՄՆ-ը¹, Ավստրալիան, Շվեյցարիան:

ՀՀ-ում ավելացված արժեքի հարկի հարցերն առաջին անգամ կանոնակարգվել են ՀՀ նախագահի 04.01.1992 թ. հրամանագրով: Ներկայումս ավելացված արժեքի հարցերը կարգավորվում են ըստ 14.05.1997 թ. ընդունված և 01.07.1997 թ. գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, դրանում կատարված փոփոխությունների ու լրացումների:

Անուղղակի հարկերը վճարվում են սպառողների, իսկ ուղղակիները՝ հարկվող օբյեկտի սեփականատերերի ու դրանց տնօրինողների կողմից և ուղղակիորեն ազդում են վերջիններիս տնտեսական գործունեության վրա: Այլ կերպ ասած, ուղղակի հարկերը յուրովի են արտահայտում պետության և հարկատուների փոխհարաբերությունները: Ընդ որում, եթե շահութահարկի ու եկամտահարկի մեծությունը կախված է հարկատուների տնտեսական գործունեության արդյունքներից, այսինքն՝ հարկատուի ստացած շահույթի ու եկամտի չափից, ապա գույքային հարկերի մեծությունը կախված չէ հարկատուի տնտեսական գործունեության արդյունքներից:

Գույքահարկ: Գույքահարկի ծագումն ունի հազարամյակների պատմություն. այն գանձվում էր դեռևս մ.թ.ա. IV դարում: Այդ ժամանակներում Հին Հռոմում գանձվում էին գույքահարկին նմանվող այնպիսի հարկեր, ինչպիսիք էին ժառանգություն անցած գույքինը, բնակարանայինը²: Ֆեոդալական ժամանակաշրջանում գույքահարկ գանձվում էր գյուղացիներից և արհեստագործներից: 1863 թ. Ռուսաստանում ներդրվեց քաղաքային շինության սեփականատերերից գանձվող հարկը՝ փոխարինելով մինչև այդ գանձվող գլխահարկին կամ շնչահարկին, իսկ XIX դարի վերջին քաղաքային շինության սեփականատերերից գանձվող հարկը փոխարինվեց անշարժ գույքի սեփականատերերից գանձվող հարկով: ԽՍՀՄ-ում և սոցիալիստական ճամբարի մյուս երկրներում գործում էր տրանսպորտային միջոցների և անասունների սեփականատերերից գանձվող հարկը, հիմնական արտադրական

¹ Ավելացված արժեքի հարկին նմանվող հարկ կիրառվել է ԽՍՀՄ-ում և անվանվել «շրջանառության հարկ», իսկ ԱՄՆ-ում կիրառվող և ավելացված արժեքի հարկին նմանվող հարկատեսակ է համարվում վաճառքի հարկը, որը գանձվում է լայն սպառման ապրանքների և ծառայությունների համար կատարվող սպառողական ծախսերից:

² Липсиц И., Экономика без тайн. М.: Дело ЛТД, 1993, с. 300-301.

Ֆոնդերի օգտագործման դիմաց գանձվող ֆոնդավճարը, իսկ Շվեդիայում, Դանիայում և այլուր գանձվում էր ունեցվածքի հարկ:

ՀՀ-ում գույքահարկը ներդրվել է 1995 թ.՝ փոխարինելով մինչ այդ գործող ֆոնդավճարին և շինությունների ու տրանսպորտային միջոցների սեփականատերերից գանձվող հարկերին: Ներկայումս գույքահարկի հարցերը կարգավորվում են 26.12.2002 թ. ընդունված և 01.01.2003 թ. գործողության մեջ դրված «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով, դրանում կատարված փոփոխություններով ու լրացումներով:

Ներկայումս գույքային հարկերը շատ երկրներում միասնականացվել և հանդես են գալիս մեկ հարկատեսակի՝ գույքային հարկերի անվան տակ: Այդ մոտեցումը կիրառվում է ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ավստրալիայում, Շվեյցարիայում և այլն¹: Հայաստանում այն հանդես է գալիս երկու հարկատեսակի՝ գույքահարկի և հողի հարկի տեսքով, որոնց դերն ու նշանակությունը կարևորվում է ոչ միայն որպես բյուջեի եկամուտների ձևավորման աղբյուր, այլև որպես եկամուտների անարդարացի բաշխման վերացման, գույքի օգտագործման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման միջոց:

Հողի հարկ: Այս հարկատեսակը կիրառվել է դեռևս Հին Եգիպտոսում, Պարսկաստանում, Հունաստանում ու Հին Հռոմում, տարածում ու զանգվածային բնույթ է ստացել միջին, իսկ իր վերջնականապես ձևավորվել է XVII-XIX դարերում:

1920-ական թվականների սկզբներին ԽՍՀՄ-ում ներդրվել է հողային ռենտան, որը գանձվում էր հողօգտագործողներից՝ նրանց կողմից գյուղացիական տնտեսության վարման արդյունքում ստացված հավելյալ եկամտից: Դրան զուգընթաց, գործում էր նաև միասնական գյուղատնտեսական հարկը, որը 1923 թ. փոխարինվեց միասնական բնամթերային հարկով²: Այնուհետև 1953 թ. ընդունված «Գյուղատնտեսական հարկի մասին» օրենքով հողօգտագործողներից օժանդակ տնտեսության համար հատկացված տնամերձ հողամասերի համար գանձվում էր գյուղատնտեսական հարկ: ԽՍՀՄ-ում հողօգտագործողներից գանձվող հողահարկի տեսակներ էին համարվում նաև անտառային եկամուտը և կուտնտեսություններից գանձվող հարկը:

ՀՀ-ում 1981 թ. ներդրվել են հողահարկն ու գյուղատնտեսական հարկը՝ փոխարինելով մինչ այդ գործող հողային վճարին ու այլ հարկատեսակների: Սակայն, 1994 թ. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ դադարեցվեց մինչ այդ գործող հողահարկի ու գյուղատնտեսական հարկի գանձումը՝ սահմանելով հողի հարկ վճարողների շրջանակը (հողի սեփականատերեր, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական ու ժամանակավոր օգտագործողներ):

Եկամտահարկ: Եկամտահարկը ֆիզիկական անձանց կողմից բյուջե վճարվող հարկատեսակ է: Այն առաջինը ներդրվել է Անգլիայում դեռևս 1798 թ.: XVIII-XIX դարերում եկամտահարկի ներդրման ձևի վրա էական ազդեցություն ունեցան բանվորական շար-

¹ Рускова И.Г., Кашин В.А., Толкушин А.В. и др., Налоги и налогообложение-М., ЮНИТИ, 2000, с. 432-434.

² «Справочник налогового работника». Под. ред. Бурмистрова Д.В., М., 1951.

ժումները, որոնց քաղաքական պահանջներն ուղղված էին նաև հարկային «բեռի» թեթևացմանը:

Յարական Ռուսաստանում եկամտահարկը օրենսդրորեն ընդունվել է ընդամենը 1916 թ. ու պետք է գործողության մեջ դրվեր 1917 թ. հոկտեմբերից: Սակայն, այդ օրենքը չունեցավ գործնական կիրառում՝ կապված այդ ամսին հեղափոխական հայտնի դեպքերի հետ:

ԽՍՀՄ-ում եկամտահարկը ներդրվել է ըստ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 30.04.1943 թ. հրամանագրի, ապա 23.04.1990 թ. ընդունված «ԽՍՀՄ քաղաքացիներից, օտարերկրյա քաղաքացիներից ու քաղաքացիություն չունեցող անձանցից գանձվող եկամտահարկի մասին» ԽՍՀՄ օրենքի:

ՀՀ-ում եկամտահարկի հարցերն առաջին անգամ կանոնակարգվել են ՀՀ նախագահի 04.01.1992 թ. «Ձեռնարկություններից, կազմակերպություններից ու քաղաքացիներից գանձվող հարկերի մասին» թիվ ՆՀ49 հրամանագրով, իսկ կարգավորվում են 27.12.1997 թ. ընդունված և 01.01.1998 թ. գործողության մեջ դրված «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով, դրանում կատարված լրացումներով ու փոփոխություններով:

Շահութահարկ: Շահութահարկն իրավաբանական անձանց կողմից բյուջե վճարվող հարկատեսակ է, որի մեծությունը կախված է հարկատուի տնտեսական գործունեության արդյունքներից: Այն շատ երկրներում ընդունված է անվանել «ընկերությունների (կորպորացիաների) հարկ»:

ՀՀ-ում շահութահարկի հարցերն առաջին անգամ կանոնակարգվել են ՀՀ նախագահի 04.01.1992 թ. թիվ ՆՀ49 հրամանագրով, իսկ ներկայումս դրանք կարգավորվում են 30.09.1997 թ. ընդունված և 01.01.1998 թ. գործողության մեջ դրված «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով, դրանում կատարված փոփոխություններով ու լրացումներով:

Ըստ համապատասխան մակարդակի բյուջեներ մուտքագրման հատկանիշի: Այս հատկանիշով կամ չափանիշով հարկերը բաժանվում են պետականի (կենտրոնականի), նահանգայինի (մարզայինի) և տեղականի (համայնքայինի)՝ կախված այն բանից, թե տվյալ երկրում բյուջետային ինչպիսի (երկմակարդակ՝, թե՞ եռամակարդակ) համակարգ է գործում:

Պետական հարկերը մուտքագրվում են պետական բյուջե և գանձվում իշխանության վերադաս մարմինների կողմից, իսկ մնացած երկուսը մուտքագրվում է համապատասխան բյուջեներ և գանձվում իշխանության տվյալ մակարդակի մարմինների կողմից:

ՀՀ-ում գործում են պետական և տեղական հարկեր: Ընդ որում, այսպիսի դասակարգման պարագայում գույքահարկն ու հողի հարկը վերագրվում են տեղական հարկերին, իսկ մնացածը՝ պետական հարկերին:

Ըստ վճարողների հատկանիշի: Այսպիսի դասակարգման դեպքում հարկերը ներառվում են վճարողների երեք խմբերում.

- ա) հարկեր իրավաբանական անձանցից,
- բ) հարկեր ֆիզիկական անձանցից,
- գ) հարկեր ֆիզիկական և իրավաբանական անձանցից:

2. Ըստ հարկվող օբյեկտի: Այս դեպքում հարկերը ներառվում են չորս խոշորացված խմբերում.

- ա) հարկեր եկամուտներից (եկամտահարկ, շահութահարկ, հարկ շահաբաժիններից),
- բ) հարկեր կապիտալից (գույքահարկ, հողի հարկ, ոչ նյութական ակտիվներից գանձվող հարկեր),
- գ) հարկեր շրջանառությունից (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, մաքսավճարներ, վաճառքի հարկ),
- դ) հարկեր ռեսուրսներից, որոնք հիմնականում գանձվում են հանքարդյունահանող և բնական ռեսուրսներ օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բնօգտագործման վճար, լիցենզիայի վճար և այլն):

Շրջանառությունից հարկերը դիմամիկ զարգացողն ու ամենատարածվածն են (ավելացված արժեքի հարկ, վաճառքի հարկ, եկամտահարկ ֆիզիկական անձանցից, ակցիզային հարկ և այլն), որոնք ակտիվ ներգործություն են ունենում երկրի տնտեսական ակտիվության, տնտեսավարող սուբյեկտների եկամտաբերության աստիճանի և, ի վերջո, նրանց շահույթի ու շահութահարկի մեծության վրա: Շրջանառության հարկերի դրույքաչափերի մեծացումը, որպես կանոն, հանգեցնում է տնտեսավարող սուբյեկտների ազատ դրամական միջոցների նվազմանը, որն էլ, իր հերթին, սահմանափակում է ձեռնարկատերերի գործարար ակտիվությունը, նվազեցնում է շահույթը կամ խթանում ծախսերի մեծացումը:

Շրջանառության հարկերի դրույքաչափերի մեծացումը տնտեսավարող սուբյեկտներին մղում է կիսալեզալ գործունեության կամ ստվերային դաշտ, իսկ դրանց իջեցումը խթանում է շրջանառության ծավալների մեծացումը և ներդրումների աճը:

Շահույթից հարկերը գանձվում են տնտեսավարող սուբյեկտի գործունեության արդյունքում ստացված շահույթից, որի մեծության արհեստական նվազեցման հնարավորությունները համեմատաբար շատ են: Այս հարկատեսակի հաշվարկումը խնդիրներ է ստեղծում ինչպես հարկային մարմինների, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների համար, մանավանդ, որ վերջիններս (շահութահարկի հաշվարկմամբ պայմանավորված) կրկնակի (հարկային և հաշվապահական) հաշվառում են վարում: Այս հարկատեսակը, հարաբերական առումով, ավելի շատ է մղվում ստվերային դաշտ, և դրանով են բացատրվում խոշոր բիզնեսով զբաղվող տնտեսավարող սուբյեկտների ծաղկումն ու դրանց հաշվեկշռային խրոնիկական վնասի կամ «չնչին շահույթի» ձևավորումը: Շահույթից հարկերի դրույքաչափից է կախված շահույթի այն մեծությունը, որը մնում է տնտեսավարող սուբյեկտների տրամադրության տակ, որի չափից են կախված նրանց ներդրումների մեծությունը, գործարար ակտիվությունը, կախվածությունը բանկային համակարգից:

Կապիտալից հարկերն առավել կայուն և ստվերային դաշտից ապահովագրված հարկերն են, քանի որ տնտեսավարող սուբյեկտների համար շատ դժվար է դրանց հարկման բազան արհեստականորեն նվազեցնելը: Կապիտալից հարկերի դրույքաչափերի մեծացումը կանխորոշում է տնտեսավարող սուբյեկտի տրամադրության տակ մնացած շահույթի ծախսման ուղղությունը: Նման դեպքում ազատ դրամական միջոցներն արտահոսում են առավել բարենպաստ հարկային ռեժիմ ունեցող երկրների տնտեսություններ, կամ ազատ

դրամական միջոցները մնում են երկրում, սակայն ուղղվում են ոչ թե դեպի արտադրություն, այլ դեպի սպառում: Կապիտալից հարկերի դրույքաչափերի բարձրացման հետևանքով կրճատվում են հիմնական միջոցների նորացմանն ուղղվող և ֆոնդազինվածության աճ ապահովող ներդրումները, մեծանում է հիմնական կապիտալի բարոյական մաշվածքը (որն էլ, իր հերթին, հանգեցնում է ծախսերի աճին և արտադրվող ապրանքների մրցունակության կորստին): Այդպիսի բացասական հետևանքներով հանդերձ, կապիտալից հարկերի բարձր դրույքաչափերը կատարում են «սանիտարական» գործառույթ՝ ստիպելով տնտեսավարող սուբյեկտներին ազատվելու հնացած արտադրական հզորություններից և առավել արդյունավետ օգտագործելու մնացած հիմնական միջոցները, որպեսզի չվճարեն «ավելորդ» հարկեր:

Սակայն, միշտ չէ, որ կապիտալից հարկերի ցածր դրույքաչափերը, խթանելով հիմնական միջոցների նորացմանն ուղղվող և ֆոնդազինվածության աճ ապահովող ներդրումները, հանգեցնում են ֆոնդահատույցի աճին, քանի որ տնտեսությունում կուտակված արտադրական կապիտալը երբեմն չի համապատասխանում տնտեսության գործարար ակտիվությանը՝ նվազեցնելով երկրի մրցունակությունը համաշխարհային շուկայում: Եվ, հատկապես, շրջանառության հարկերի բարձր դրույքաչափերի դեպքում իրեն զգալ է տալիս հիմնական միջոցների ոչ ռացիոնալ օգտագործելու վախը կամ ռիսկը, իսկ կապիտալից հարկերի ցածր դրույքաչափի պայմաններում ձեռնտու է դառնում սեփական միջոցների պահպանումը գույքի ձևով:

3. Ըստ վճարման նշանակության, որի դեպքում հարկերը ներառվում են երկու խոշորացված խմբերում.

ա) ընդհանուր նշանակության հարկեր,

բ) հատուկ նշանակության հարկեր, օրինակ՝ սոցիալական վճարներ:

Բացի վերոհիշյալ և համընդհանուր ճանաչում ստացած դասակարգումից՝ հարկերն անհրաժեշտ է դասակարգել նաև ըստ հարկվող օբյեկտի և միջին հարկադրույքի փոփոխության հարաբերակցության¹:

Այդ փոփոխությունների հարաբերակցությունից կախված՝ փոփոխվում է նաև հարկի մեծությունը:

Եթե հարկի մեծությունը նշանակենք \mathcal{L} -ով, հարկվող օբյեկտինը՝ $\mathcal{L}\mathcal{O}$ -ով, հարկման միջին դրույքաչափը (վերածված գործակցի)՝ \mathcal{Q} -ով ($\mathcal{Q} \geq 0$, $\mathcal{Q} < 1$), ապա հարկի մեծությունը բոլոր հարկատեսակների դեպքում կարելի է ներկայացնել հետևյալ հավասարումով.

$$\mathcal{L} = \mathcal{L}\mathcal{O}2\mathcal{Q} \quad (1)$$

Եթե $\mathcal{L}\mathcal{O}$ -ի փոփոխված մեծությունը նշանակենք $\mathcal{L}\mathcal{O}1$ -ով, իսկ \mathcal{Q} -ի փոփոխվածը՝ $\mathcal{Q}1$ -ով, ապա \mathcal{L} -ի փոփոխված մեծությունը ($\mathcal{L}1$) կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. $\mathcal{L}1 = \mathcal{L}\mathcal{O}12\mathcal{Q}1$:

Հետևաբար՝ հարկի մեծության փոփոխությունը ($\mathcal{L}1 - \mathcal{L}$)-ը կարելի է արտահայտել հետևյալ հավասարումով.

¹ Տ.Վ. Հարությունյան, Հարկման արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Ձանգակ-97», 2006, էջ 22-26:

$$\zeta_1 - \zeta = \zeta_{O12} \varphi_1 - \zeta_{O2} \varphi \quad (2)$$

Փորձենք վերծանել այս հավասարումը: Եթե հարկվող օբյեկտի փոփոխության գործակիցը նշանակենք ζ_{O2} -ով, իսկ գործակցի վերածված միջին հարկադրույքի փոփոխության գործակիցը՝ φ_2 -ով, ապա կարող ենք ստանալ հետևյալ հավասարումները. $\zeta_{O1} = \zeta_{O2} \zeta_{O2}$ և $\varphi_1 = \varphi_2 \varphi_2$: Դրանք տեղադրելով (2) հավասարման մեջ՝ ստացվում է, որ.

$$\zeta_1 - \zeta = \zeta_{O2} \zeta_{O2} \varphi_2 \varphi_2 - \zeta_{O2} \varphi \quad (3)$$

կամ

$$\zeta_1 - \zeta = \zeta_{O2} \varphi_2 (\zeta_{O2} \varphi_2 - 1) \quad (4)$$

Հավասարումից պարզ է դառնում, որ հարկի մեծության փոփոխությունը կախված է ($\zeta_{O2} \varphi_2 - 1$) տարբերությունից: Բանաձևից (4) հետևում է, որ առկա են հարկի մեծության փոփոխության երեք խոշորացված տարբերակներ.

առաջին՝ հարկի մեծությունը մնում է անփոփոխ ($\zeta_1 = \zeta$),

երբ $\zeta_{O2} \varphi_2 = 1$,

երկրորդ՝ հարկի մեծությունը նվազում է ($\zeta_1 < \zeta$),

երբ $\zeta_{O2} \varphi_2 < 1$,

երրորդ՝ հարկի մեծությունն աճում է ($\zeta_1 > \zeta$),

երբ $\zeta_{O2} \varphi_2 > 1$:

Քննարկենք նշված տարբերակներն առանձին-առանձին:

Առաջին տարբերակի պարզագույն ընկալմամբ հարկի մեծությունը չի փոփոխվում, եթե անփոփոխ են մնում հարկվող օբյեկտի ծավալներն ու միջին հարկադրույքի չափերը, այսինքն՝ երբ $\zeta_{O2} = 1$ և $\varphi_2 = 1$: Սակայն, երբ խորանում ենք երևույթի էության մեջ, տեսանելի են դառնում ζ_{O2} -ի և φ_2 -ի այն բազմաթիվ կոմբինացիաները, որոնց դեպքում հարկի մեծությունը մնում է անփոփոխ: Այդ բազմաթիվ կոմբինացիաներից է, օրինակ, երբ $\zeta_{O2} = 0.5$, $\varphi_2 = 2$ կամ $\zeta_{O2} = 0.2$, $\varphi_2 = 5$, կամ $\zeta_{O2} = 2.5$, $\varphi_2 = 0.4$ և այլն:

Երկրորդ տարբերակի դեպքում հարկի մեծությունը նվազում է, երբ 1) $\zeta_{O2} = 1$, $\varphi_2 < 1$, 2) $\zeta_{O2} < 1$, $\varphi_2 = 1$, 3) $\zeta_{O2} < 1$, $\varphi_2 < 1$ և այլն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հարկի մեծության անփոփոխության կամ նվազման հարցերը տնտեսության զարգացման և հարկային քաղաքականության խնդիրների համատեքստում գործնական հետաքրքրություն չեն ներկայացնում, անհրաժեշտ ենք համարում առաջին և երկրորդ տարբերակների դեպքում սահմանափակվել կատարված դիտարկումներով:

Երրորդ տարբերակի դեպքում հարկի մեծությունն աճում և նպաստավոր դաշտ է ստեղծում պետության առջև դրված խնդիրները լուծելու համար: Ահա թե ինչու, երրորդ տարբերակի մանրամասն քննարկումը պետք է դառնա հարկային քաղաքականության առանցքը՝ տնտեսության կայունացումն ու զարգացումը երկարաժամկետ հատվածում ապահովելու հպատակով: Սակայն, մինչ այդ հարցադրումներին ու դրանց լուծումներին անդրադառնալը, փորձենք երրորդ տարբերակի դեպքում տեսանելի դարձնել հարկի ավելացման միտումները:

Երրորդ տարբերակի դեպքում հարկերի մեծությունն աճում է այն դեպքերում, երբ.

1) $\text{CO}_2=1$, $\text{Q}_2>1$: Այս դեպքի ժամանակ, փաստորեն, հարկվող եկամտի ծավալը կամ հարկման օբյեկտը մնում է անփոփոխ, իսկ միջին հարկադրույքի գործակիցն աճում է: Միաժամանակ, հարկի մեծությունը որոշվում է միջին հարկադրույքի աճի գործակցի բազմապատկիչի չափով, այսինքն՝ հարկի աճն ուղիղ համեմատական է միջին հարկադրույքի աճի գործակցին:

Այլ կերպ ասած, հարկի մեծությունն աճում է միջին հարկադրույքի աճի գործակցին համամասնորեն: Սակայն, այս դեպքը զարգացող տնտեսության պայմաններում, առավել ևս երկարաժամկետում, գործնական կիրառություն չի կարող ստանալ, քանի որ. մի կողմից՝ հարկվող օբյեկտի ծավալը դիտարկվում է որպես անփոփոխ մեծություն, իսկ մյուս կողմից՝ միջին հարկադրույքը, որպես աճող փոփոխական, կարող է հանգեցնել հարկվող օբյեկտի (CO) նվազեցմանը:

2) $\text{CO}_2<1$, $\text{Q}_2>1$, երբ միջին հարկադրույքի աճի տեմպը գերազանցում է հարկվող եկամտի նվազման տեմպը: Այս դեպքում հարկի մեծությունը կարող է աճել այն էլ միայն կարճաժամկետ հատվածում, իսկ երկարաժամկետում այս դեպքի քննարկումը դառնում է անիմաստ:

3) $\text{CO}_2>1$, $\text{Q}_2=1$: Այս դեպքում միջին հարկադրույքի մեծությունը մնում է անփոփոխ, իսկ հարկվող օբյեկտի (CO) մեծությունը դիտարկվում է որպես աճող փոփոխական, որոնց միաժամանակյա գործողության պայմաններում հարկի մեծությունը (C) ուղիղ համեմատական կամ համամասնական է հարկվող օբյեկտի աճի գործակցին (CO_2): Այս դեպքը բնորոշ է զարգացող տնտեսությանը ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ հատվածում: Ուստի այն հետաքրքրության և ուշադրության արժանի դեպք է հարկային քաղաքականության հիմնախնդիրների տեսանկյունից:

4) $\text{CO}_2>1$, $\text{Q}_2<1$, երբ հարկվող օբյեկտի փոփոխության գործակցի (CO_2) աճի տեմպը գերազանցում է միջին հարկադրույքի փոփոխության գործակցի նվազման տեմպը, որոնց միաժամանակյա գործողության պայմաններում հարկի մեծությունն աճում է: Այս պայմաններում հարկը ձեռք է բերում աճողական բնույթ: Սակայն, միջին հարկադրույքի փոփոխության գործակցի նվազման տեմպը գերազանցում է հարկվող օբյեկտի փոփոխության գործակցի աճի տեմպը. գերազանցելու դեպքում հարկի մեծությունը թեպետ բացարձակորեն աճում է, սակայն հարաբերականորեն ձեռք է բերում նվազման միտում:

5) $\text{CO}_2>1$, $\text{Q}_2>1$: Այս դեպքում հարկի մեծությունն ավելանում է, երբ.

- ա) Հարկվող օբյեկտի և միջին հարկադրույքի փոփոխության գործակիցները (CO_2 , Q_2) ունենում են աճի հավասար տեմպեր: Այս իրավիճակում հարկի մեծությունն առավել աճողական բնույթ է ձեռք բերում:
- բ) Հարկվող օբյեկտի փոփոխության գործակցի (CO_2) աճը գերազանցում է միջին հարկադրույքի փոփոխության գործակցի աճը: Հարկի մեծությունն այս իրավիճակում ևս աճողական է:
- գ) Միջին հարկադրույքի փոփոխության գործակցի (Q_2) աճը հարկվող օբյեկտի փոփոխության գործակցի (CO_2) աճը գերազանցելու պայմաններում նույնպես աճողական է:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ վերոհիշյալ խնդիրները զարգացող տնտեսության պայմաններում և երկարաժամկետ հատվածում անհրաժեշտ է քննարկել ու լուծումներ որոնել հարկի մեծության փոփոխության միայն երրորդ տարբերակում և այն էլ՝ միայն երրորդ, չորրորդ և հինգերորդ դեպքերի համար: Պարզվում է նաև, որ հարկի աճողականությունը, համամասնականությունը և նվազողականությունը հանդես են գալիս որպես դրա ծավալի փոփոխության աստիճանի վարք, որը ձևավորվում է տնտեսական որոշակի իրավիճակում և կախված է հարկման գործող մեխանիզմներից: Ուստի սխալ կլինի հարկատեսակի անվանումը ելակետ դարձնելով այն վերագրել աճողականի, համամասնականի կամ նվազողականի, քանի որ նույն հարկատեսակը վերոհիշյալ փաստարկների արդյունքում կարող է ձեռք բերել մի դեպքում՝ աճողական, մեկ այլ դեպքում՝ համամասնական, իսկ երրորդ դեպքում՝ նվազողական բնույթ:

Հարկերի դասակարգումը, ըստ վերոհիշյալ հատկանիշի, սխեմատիկ ձևով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հարկերի դասակարգումն ըստ հարկվող օբյեկտի և միջին հարկադրույքի փոփոխության հարաբերակցության աստիճանի

№	Դասակարգման պայմաններ	Աճողական	Համամասնական	Նվազողական
1.	$\angle O2 > 1, \varphi 2 = 1$		E	
2.	$\angle O2 > 1, \varphi 2 < 1$: $\angle O2$ -ի աճի տեմպը գերազանցում է $\varphi 2$ -ի աճի տեմպը	E		
3.	$\angle O2 > 1, \varphi 2 < 1$: $\varphi 2$ -ի աճի տեմպը գերազանցում է $\angle O2$ -ի աճի տեմպը			E
4.	$\angle O2 > 1, \varphi 2 > 1$	E		

Ծանոթություն՝

$\angle O2$ -ը հարկվող օբյեկտի փոփոխության գործակիցն է, իսկ $\varphi 2$ -ը՝ գործակցի վերածված միջին հարկադրույքի փոփոխության գործակիցը:

Այսպիսով, հարկվող օբյեկտի և միջին հարկադրույքի փոփոխության հարաբերակցությունից կախված, հարկերն աճողական բնույթ են ձեռք բերում, երբ.


- ա) հարկվող օբյեկտի և միջին հարկադրույքի փոփոխության գործակիցները գերազանցում են մեկը և
- բ) հարկվող օբյեկտի փոփոխության գործակիցը գերազանցում է մեկը, միջին հարկադրույքի¹ փոփոխության գործակիցը փոքր է լինում մեկից, իսկ հարկվող օբյեկտի փոփոխության գործակցի աճի տեմպը գերազանցում է միջին հարկադրույքի աճի տեմպը:

Հարկերը նվազողական բնույթ են ձեռք բերում, երբ հարկվող օբյեկտի փոփոխության գործակիցը գերազանցում է մեկը, միջին հարկադրույքի փոփոխության գործակիցը

¹ Հարկվող օբյեկտի տարբեր միջակայքերում դրանք լինում են տարբեր:

փոքր է լինում մեկից, իսկ միջին հարկադրույքի փոփոխության գործակցի աճի տեմպը գերազանցում է հարկվող օբյեկտի փոփոխության գործակցի աճի տեմպը:

Այսպիսով՝ հարկերի դասակարգումը կարելի է ներկայացնել ըստ գծապատկեր 1-ի:



Գծապատկեր 1. Հարկերի դասակարգման հատկանիշները

Հարկերը համամասնական բնույթ են ձեռք բերում, երբ հարկվող օբյեկտի փոփոխության գործակցիցը գերազանցում է մեկը, իսկ միջին հարկադրույքի փոփոխության գործակցիցը հավասարվում է մեկի:

**ВЛАДИМИР АРУТЮНЯН
ТИГРАН АРУТЮНЯН**

ТИПЫ НАЛОГОВ И ИХ КЛАССИФИКАЦИЯ

Ключевые слова: налоги, налоговая эффективность, прямые налоги, косвенные налоги, налоговая политика, подоходный налог. налог на прибыль, акцизный налог

В статье анализируются особенности налоговой классификации, а также типы и виды налогов. Кроме того, подтверждено, что эффективная налоговая политика может способствовать стимулированию экономической активности путем практики налоговых льгот и равноправия.

VLADIMIR HARUTYUNYAN
TIGRAN HARUTYUNYAN

TAX TYPES AND THEIR CLASSIFICATION

Key words: *Taxes, tax efficiency, direct taxes, indirect taxes, tax policy, income tax, profit tax, excise tax*

The article analyzed the peculiarities of tax classification, as well as types and types of taxes. In addition, it has been confirmed that the effective tax policy could facilitate economic activity by applying the incentive and fair functions of taxes.

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՎԱՐՄԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր. *ինտեգրման գործընթացներ, համախառն խնայողություններ, ներքին ներդրումներ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, վերազգային կորպորացիաներ, բարձր արդյունավետություն, քիմիական արդյունաբերություն*

Հայաստանը՝ որպես փոքր բաց տնտեսություն ունեցող երկիր, բավական մեծ կախվածություն ունի համաշխարհային տնտեսությունից: ՀՀ-ում ներդրումների ֆինանսավորման հարկապես ներքին աղբյուրները չափազանց սահմանափակ են: Այս իմաստով, ժամանակակից տնտեսությունների միջև շուկաների բաժանման և վերաբաժանման շնորհիվ ձևավորվող տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային նոր տիպի հարաբերությունները նախադրյալներ են ստեղծում ինտեգրացիոն նոր միավորումների համար: Կարծում ենք՝ լրացուցիչ ներդրումների ներգրավման նպատակով ՀՀ տնտեսության համար կիրառելի են վերազգային կորպորացիաների հետ ինտեգրման հնարավորությունները մի շարք ոլորտներում, այդ թվում՝ քիմիական արդյունաբերության մեջ:

Ժամանակակից տնտեսությունների միջև, շուկաների բաժանման և վերաբաժանման շնորհիվ, ձևավորվում են տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային նոր տիպի հարաբերություններ՝ նախադրյալներ ստեղծելով ինտեգրացիոն միավորումների բազմազանեցման համար: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների